

Հարց

Ո՞վ է գրանցում առևտրային հաշվիչի ցուցմունքը:

Պատասխան

Առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին և հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Մատակարարը պարտավոր է սպառողի (բացառությամբ բնակչության) առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել նրա ներկայությամբ, եթե վերջինս ներկայացրել է նման գրավոր պահանջ, կամ այդ պարտավորությունը անրագրված է պայմանագրում: Նման դեպքում մատակարարը պարտավոր է սպառողին նախապես՝ առնվազն երեք օր առաջ, գրավոր տեղեկացնել առևտրային հաշվիչի ցուցմունքի գրանցման օրվա և ժամի մասին: Բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվիչի ցուցմունքը գրանցել առանց սպառողի: